

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հուլիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցական զարգացման ծառայության Գերմանիայի եկեղեցիների միության պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի (ՀԿՍ) տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի: Պատվիրակության կազմում էին Միության տնօրենների խորհրդի անդամ, Հարավարևելյան Եվրոպայի և Կովկասյան հանրապետությունների ծրագրի, Բալկանների ծրագրի և Հարավարևելյան Եվրոպայի և Կովկասյան հանրապետությունների տարածաշրջանային «Երկխոսության գրասենյակի» պատասխանատուները:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց միությանը այն բոլոր օգտաշատ ծրագրերի համար, որ իրականացվում են տարբեր երկրներում և, մասնավորաբար, Հայաստանում՝ հիմնականում Կլոր Սեղան հիմնադրամի միջոցով: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Կլոր Սեղանի և Գերմանիայի եկեղեցիների միության միջև ձևավորված սերտ համագործակցությանը և հիմնադրամի աշխույժ գործունեությանը:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սոցիալական ծրագրերի մասին:

ՀԿՍ-ն հիմնադրվել է 1996 թվականին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համատեղ նախաձեռնությամբ: Այսօր Կլոր Սեղանը հիմնականում աշխատում է համապարփակ համայնքային զարգացման, կարողությունների զարգացման և տարածաշրջանում խաղաղության և հանդուրժողականության խթանման ոլորտներում: